

## Հայ գրականության մարզային փուլ - 2022 թ.

### Հարցաշարերի պատասխանները - 12-րդ դասարան

1. Վահան Տերյանին նվիրված չարենցյան շարքը ավստասանքի, սիրո, գնահատանքի խոստովանություն է, որ արել է Չարենցը՝ իմանալով պաշտելի Տերյանի մահվան բոթը: Բյուրավոր զանգերի դողանջովչարենցն օրհերգում է Տերյանի հիշատակը՝ համոզված, որ Տերյանը միշտ գալու է աշնան, անձրևի, գիշերվա հետ, երգելու է իր սերը՝ « Որ վերջին մեր սերն է աշխարհում գուցե»: Չարենցյան շարքը բաղկացած է 3 մասից՝ ավստասանք ու վիշտ, գնահատանք ու մեկնություն, անմահության երթ:

Վահան Տերյան, ինչպե՞ս երգեմ հիշատակը քո

Թող լուռ փոփի հիմա իմ դեմ անլույս երեկո:

Սրտիս վրա իջնի թող մութ մի ամպի քուլա,

Քամին բերե թող մահվան բոթ, ու անձրևը լա:

Եվ թող թափվեն շուրձս աշնան տերևներ դեղին

Եվ զարդարեն , Վահան Տերյան, քո անցած ուղին:

Ու մշուշում տխուրերգով բյուրավոր զանգեր

Թող օրհներգեն թախիծը քո, իմ հեռու ընկեր...

Տերյանի հայրենասիրական երգերը առավելագույնս ամփոփված են « Երկիր Նաիրի»

շարքում, որը Չարենցն անվանել է «Նաիրյան խոսքերի թանգարան»:

Շարքը գրվել է հայ ժողովրդի պատմության ամենադաժան տարիներին. «Չէ՞ որ այդպես, իմ

հոգու նման այրվում է իմ երկիրը, իմ Նաիրին, գուցե դրա համար է այրվում իմ հոգին,

որովհետև իմ հոգու մեջ Նաիրյան չքնաղ երկիրն է այրվում»: Ելնելով Տերյանի

բացատրությունից՝ մասնակիցը պետք է ընտրի բանաստեղծությունը:

«Մի՛ խառնեք», «Մի՞ թե վերջին պոետն եմ», «Հայրենիքում իմ արնաներկ» և այլն:

2. 1930-ական թվականներին Նաիրի Չարյանը ,ելնելով հեղափոխական գրականության դիրքերից ու հավատալով ժամանակի գաղափարախոսությանը, կատարեց մի շարք անդառնալի սխալներ, որոնց համար հետագայում ծանր զոջում ապրեց: Իր մեղանչումների պատճառը նա փորձում էր արդարացնել իր հախուռն ու դյուրահավատ բնավորությամբ, որն ի սկզբանե ըկալելի չէ, քանի որ նույն ժամանակաշրջանում, նույն հասարակության մեջ ապրում ու պայքարում էին շատ ազնիվ գրողներ ու գործիչներ: Բանը հասավ այնտեղ, որ նա 1930-ական թվականներին « արնախում» անվանեց իրեն թուրքական յաթաղանից փրկված զորավարի թուրը՝ ասելով, որ նա սպանել է իր թուրք քրոջը : Սակայն զուլալվեցին պղտոր հեղեղները, պատմությունը ներկայացավ իր ողջ ճշմարտությամբ, և Չարյանը գրեց արեց իր ծանր խոստովանությունը՝ ներումն հայցելով ոչ միայն մեծ զորավարից, այլև իր ուսուցչից ու բարեկամից՝ իրեն բանաստեղծական անուն շնորհած Մեծն Չարենցից, նաև իրեն ծնող ժողովրդից: Նա գրում է «Ասք Անդրանիկ զորավարի» պոեմը՝ նրան անվանելով «Հայոց տարաբախտ Գարիբալդի», երագում է նրա վերադարձը: Փոխվել էին ժամանակները, և արդարացվում էին ժողովրդի երբեմնի «թշնամիները», շատերի հետ Չարյանը ևս կանգնում է պատմության դատի առջև և գրում ապաշխարանքի այրող խոսքեր: Գրում է իր գրույցը Չարենցի հետ՝ առանց հիշատակելու անունը (երևի այրող ամոթից), «Զրույց մեռած բանաստեղծի հետ», « Ասք ի խորոց սրտի»: Այնուհետև գրում է «Ես մոլորվել եմ շատ անգամ,

Դու ների՛ր ինձ, իմ ժողովուրդ»:

Ներեցի՞նք կամ ներե՞լ ենք Չարյանին. թող ասի մասնակիցը:

3. Պարույր Սևակը՝ «Հայ գրականության Քուռկիկ Ջալալին», այսօր էլ մեր էպոսի առասպելական նժույզի նման իշխում է մեր մտքին ու հոգուն, ապրում ու ապրեցնում հայ բազմադարյան գրականությունը՝ միաժամանակ բորբոքելով իր բոցավառ խոսքերի քուրան, որտեղ թրծվում է մեր գրականության «գալիք օրը»:

Սևակի ծննդավայր Ամանեջ- Չանախչի- Մովեսաշենը այժմ Ջանգակատուն է կոչվում, և դողանջում են սևակյան զանգերը՝ կոչելով ապրողաց՝ արժանի լինել մեծ մտածողի ընթերցողը լինելու պատվին: Իր և իր նմանների մասին Սևակի հանճարեղ ձևակերպումը արդիական է այսօր և միշտ՝ Ուշ- ու են գալիս, բայց ոչ ուշացած. ծնվում են նրանք ճիշտ ժամանակին ու ժամանակից առաջ են անցնում. դրա համար էլ չեն ներում նրանց...

Իր սքանչելի պոեմը Սևակը գրել է հեռու Մոսկվայում՝ հայրենքից օտարված ու կարոտած: Պոեմը գրվել է մեկ տարում՝ 1957-1958, տպագրվել է 1959-ին՝ միագամից նվաճելով գրական ու հանրային կյանքի բոլոր ոլորտները: Կոմիտասի կերպարը ամբողջ կյանքում հետևել է Սևակին. այնքան տառապանքով է ստեղծվել պոեմը, որ ավարտից հետո Սևակն այսպիսի գրառում է արել. «Մի թե ավարտեցի- հավատս չի գալիս»: Իր հարցազրույցներից մեկու Սևակն ասում է. ««Ջանգակատունը գրել եմ իմ ամբողջ գիտակցական կյանքում. գրել եմ զանազան ձևերով՝ իբրև վեպ, իբրև վիպակ, իբրև ուսումնասիրություն, իբրև ողբերգություն կամ դրամա »: Ի վերջո գրվել է իբրև պոեմ՝ 7000 այրող տողեր, վառք ուերգ, մորմոք ու կարոտ, իբրև երգ ու պատմություն: Պոեմի նյութը չափազանց զգայական է. «Գրել Կոմիտասի մասին հավասարազոր էր գրել հայ ժողովրդի վերջին հարյուր տարվա պատմությունը՝ ժողովրդի կյանքով ու երազանքներով, կենցաղով ու գոյամարտով, երգով ու լացով, եվրոպական դիվանագիտությամբ ու թուրքական բարբարոսությամբ, ազգագրությամբ ու ազգագիտությամբ, անցյալով ու ապագայով»: Այդպես էլ շարադրված է ողջ պոեմը. գործը մտահղացվել է իբրև համանվագ՝ սիմֆոնիա. բաղկացած է վեց համանվագներից և 46 դողանջներից: Եթե քաղաքականություն է՝ նույնն են թուրքականն ու ռուսականը, ծնվում են Կոմիտասն ու Թումանյանը՝ միավորելու ազգայինը: Այնուհետև կոմիտասյան երգերով գրվում են մեր պատմության արյունոտ էջերը: Եթե սկիզբ է ու ապրելու իրավունք, ապա Մաշտոց ու Կոմիտաս: Ի վերջո նույնացվում, հավասարեցվում է երկու հանճարների գործը, և Կոմիտասը դառնում է.

Դու Ամենայն Հայոց Երգի Վեհափառն ես,  
Դու մեր երգի Մեսրոպ Մաշտոց,  
Դու մեր երգի Մեսրոպ Մաշտոց,  
Գիրն ու տառն ես Հայոց երգի:

«Անլռելի զանգակատան» ուժն ու արժանիքը նրա մեծ ընդհանրացման մեջ է. բանաստեղծը կտրել է Կոմիտասը Կոմիտասից և այն դարձրել խորհուրդ ու խորհրդանշան՝ մնալով սակայն միշտ Կոմիտասի հետ»: Այսպես է արժևորել Մեծն Մահարին. ավելի ընդգրկուն ասել հնարավոր չէ. այդ նաև՝ Մեր տաղի քուրմ, մեր խաղի մոգ, մեր մշտահունչ ու մշտարթուն՝

ԱՆԼՌԵԼԻ ՉԱՆԳԱԿԱՏՈՒՆ

Շրջասույթներ՝ Նաիրյան հանճարի սերմնացան, հայ երգի Մեսրոպ Մաշտոց, երգի հովիվ, ձայների արքա:

4. Նորոգված ու նոր դպրության  
Մի սահանք է եղել աշխարհում,  
Եվ գուցե երբևէ կհիշես,  
Որ այդ նոր սահանքում նաև  
Մի Սահյան է եղել աշխարհում:

Սա է մեծ բնապաշտի մարդկային սովորական ցանկությունը, բայց նրա պոեզիայի երկրպագուները շեշտում և պնդում են՝ Հրաշք լինել, դու գայիր ու Գյազբեղի Բարձունքից հնչեց աղոթքը Մեծիդ՝ որ թողել ես մեր հոգում: Ու մենք զգայինք ոչ մի բառով չասվող հավերժական տազնապը ու մնաս բարով չասեինք միմյանց, որովհետև մենք ապավինել ենք քո Քարափին, ծվարել ենք քիվի տակ ու ապրում ենք սահյանական բնապաշտությամբ: Սահյանի բնապաշտությունը սնվում է Մեծարենցի, Բակունցի, Եսենինի երակներից. բնությունը Սահյանի հոգու թարգմանն է, նրա սերերի, հիասթափությունների ու ուրախության աղբյուրը: Որոտանի ափերին, թե մասրենու բուրմունքում, առվի ափերին, թե անտառի աշնանային հեքում մենք զգում ենք Սահյանի Հայաստանոտ սրտի բաբախյունը: «Քարափը» բանաստեղծությունը բնության անձնավորման սքանչելի օրինակ է՝ հողի ու մարդու միասնության օրհներգ, որտեղ քարափը անձնավորում է ժողովրդական նահապետի, որը հարգված ու սիրված է բոլորից, ով յուրաքանչյուրին իրեն արժանի պատիվն է տալիս, ով նահապետի նման պահում է յուրաքանչյուրի տեղը՝ ապահովելով տարիների երթը, և խառնվում են ժամանակները, իսկ քարափը կանգնած է որպես հավերժության խորհրդանիշ:

#### **Գնահատման չափանիշները /12-րդ դասարան/**

##### **1-ին հարց**

- 1 ենթահարց՝ 2 մ.
- 2 ենթահարց՝ 2 մ.
- 3 ենթահարց՝ 1 մ.

##### **2-րդ հարց**

- 1 ենթահարց՝ 1 մ.
- 2 ենթահարց՝ 2 մ.
- 3 ենթահարց՝ 1 մ.
- 4 ենթահարց՝ 1 մ.

##### **3-րդ հարց**

- 1-2 ենթահարցեր՝ 1-ական մ.
- 3-4 ենթահարցեր՝ 0,5-ական մ.
- 5 ենթահարց՝ 2 մ.

##### **4-րդ հարց**

- 1-2 ենթահարցեր՝ 2-ական մ.
- 3 ենթահարց՝ 1 մ.